**Բացատրագիր**

Երևան քաղաքի Տիգրան Մեծ փ. (Տիգրան Մեծ փ. - Միլիք Ադամյան փ. խաչմերուկից մինչև Տիգրան Մեծ փ. - Ս. Դավիթ փ. խաչմերուկ) միջին նորոգման աշխատանքների նախագիծը կազմված է համաձայն Երևանի քաղաքապետարանի կողմից տրված առաջադրանքի և ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-26/20 պայմանագրի կնքված «Արցախճան» ինստիտուտ ՓԲԸ-ի հետ:

**Հետախուզական աշխատանքների ժամանակ օգտագործված գործիքների անվանումը**

Trimble R8s մոդելի GPS սարքի և Leica ViVa TS11 մոդելի տախեոմետրիական սարք ,ճշտությունը 0,5 մմ: Չափագրումը կատարվել է ARM-WAG կորդինատային համակարգով բարձրությունը՝ Բալթյան համակարգ:Համակարգը էլեկտրոնային է :

Տեղագեոդեզիական հետազննումն իրականացվել է ԳՕՍՏ 32869-2014-ի և ստանդարտներով սահմանված պահանջների և ՀՀ-ում գործող այլ գերատեսչական նորմատիվային փաստաթղթերի համաձայն:

**Նախագծային լուծումներ**

Միջին նորոգման աշխատանքներում նախատեսվել է իրականացնել հետևյալ աշխատանքները

- Ճանապարհային պատվածքի մաշված շերտի ֆրեզում h=5սմ, տեղափոխում պատվիրատուի կողմից նշված վայր՝ Երևան քաղաքի տարածքում, 13կմ հեռավորության վրա:
- Ֆրեզված ճանապարհածածկի փոսային նորոգում h=5սմ մանրահատիկ ա/բետոնով
- Փոսային նորոգում հիմքով՝ չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով 4,12տ/1000մ² և տաք ծակոտկեն խոշորահատիկ ա/բետոն h=6սմ
- Հարթեցնող շերտի իրականացում $h_{միջ}$=3սմ
- Տաք մանրահատիկ ա/բետոնի իրականացում h=5սմ

Նախատեսվել է նաև հատող փողոցների նորոգում նույ կառուցվածքով:

Մուտքերում նախատեսվել է մաշված ա/բ շերտի ֆրեզում և միաշերտ մանրահատիկ ա/բետոնի իրականացում:

Նախատեսվել է դիտահորորի և անձրևընդունիչների նորոգում, լողացող դիտահորեր և ե/բ սալեր թուջե կափարիչով և ցանցով:

Ե/բ սալը , թուջե օղակը և կափարիչը նախատեսվել են ԳՕՍՏ 3634-99-ի պահանջներին համապատասխան:

Նախագծային փաստաթղթերը կազմվել են ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025թ. ապրիլի 1-ի N08-Ն հրամանով սահմանված պահանջներին համապատասխան:

Ներկայացված են ամփոփագրեր յուրաքանչյուր ներկայացված աշխատանքների համար:

Կազմեց՝ Ա. Սարգսյան